ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2023 թվականի N 263 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ հաստատված կարգը,

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

18.07.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 18
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. հուլիսի 18-ի N 263-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստան Հանրապետության 2023 թվականի պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարի չափը

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	ՀՀ 2023թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	5818700
2	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	547700
3	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	137500

18.07.2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար՝ **Է. Մարտիրոսյան**